

ԾԱՆՈՒՑՈՒՄ՝ ԲՈՒՈՐ CALFRESH ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՆՊԱՍՍ (WORK INCENTIVE NUTRITIONAL SUPPLEMENT, WINS) ԿԱՐԵՎՈՐ Է. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ

WINS-ը ամսական \$10 արժողության լրացուցիչ պարենային նպաստների ծրագիր է աշխատող ընտանիքների համար, որոնք ստանում են CalFresh նպաստներ, բայց չեն ստանում Կալիֆոռնիա նահանգի «Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների նյութական օգնության և աշխատանքի տեղավորման ծրագրի» (California Work Opportunity and Responsibility to Kids, CalWORKs) կամ «Ցեղային կարիքավոր ընտանիքների ժամանակավոր օգնություն» (Tribal Temporary Assistance to Needy Families, TANF) ծրագրի նպաստներ:

Կալիֆոռնիա նահանգի օրենսդրությունը նախատեսում է հետևյալը՝

- CalFresh ընտանիքները, որոնք բավարարում են WINS ստանալու համար ներկայացված աշխատանքային ժամաքանակի պահանջները, բայց չեն ստանում CalWORKs կամ Ցեղային TANF նպաստներ, կարող են իրավունք ունենալ ստանալու լրացուցիչ ամսական \$10 արժողության պարենային նպաստ:
 - Աշխատանքային ժամաքանակի պահանջներն են՝
 - շաբաթական 20 ժամ մեկ խնամակալ ծնողից կամ խնամողից և վեց տարեկանից ցածր տարիքի առնվազն մեկ երեխայից բաղկացած ընտանիքների համար.
 - շաբաթական 30 ժամ ոչ երկու ծնողից կամ խնամողից և վեցից ութ տարեկան երեխայից (երեխաներից) բաղկացած ընտանիքների համար.
 - շաբաթական 35 ժամ երկու ծնողից կամ խնամողից բաղկացած ընտանիքների համար:
- Հաշվի է առնվում ցանկացած վճարվող աշխատանք (նույնիսկ եթե այն սուբսիդավորվում է, ինչպիսին է ուսանելու ընթացքում աշխատելը): Այն ներառում է նաև ինքնազբաղվածությունը:
 - Ձեր ընտանիքը կարող է նպաստ ստանալու իրավունակ լինել, եթե Դուք՝
 - o CalFresh ընտանիք եք, բայց չեք ստանում CalWORKs կամ Ցեղային TANF, և
 - o տանն ունեք 18 տարեկանից փոքր երեխա, և
 - o տանն ունեք առնվազն մեկ ծնող կամ խնամակալ, ով համապատասխանում է TANF ծրագրի «աշխատելու իրավունք ունեցող անհատ» սահմանմանը և վերը նշված բավարար ժամաքանակներով ընդգրկված է դաշնային TANF պահանջներին համապատասխանող աշխատանքային գործունեության մեջ:
 - Այս ամսական վճարումը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ համապատասխանում եք WINS ծրագրի պահանջներին:
 - \$10 արժողության նպաստը պարենային նպաստ է և չի կարող օգտագործվել որպես կանխիկ փող:
 - Եթե ուզում եք ավելին իմանալ, դիմեք Ձեր սոցիալական աշխատողին:

Յուրաքանչյուր իրավունակ CalFresh ընտանիք կարող է ամսական ստանալ միայն մեկ WINS նպաստ: Նպաստը մուտքագրվելու է ընտանիքի նպաստների էլեկտրոնային փոխանցման քարտին (Electronic Benefits Transfer, EBT) որպես ընտանիքի CalFresh նպաստների հատկացման պարենային հավելավճար: WINS նպաստ ստանալու իրավունակությունը որոշվում է այն ժամանակ, երբ դիմում եք նպաստների համար, գեկուցում եք փոփոխությունների մասին կամ վերավկայագրվում եք նպաստների համար: Եթե համապատասխանեք WINS-ի պահանջներին, նպաստը կավելացվի Ձեր EBT քարտին:

Ձեր աշխատանքային ժամաքանակն անպայման հայտնեք իրավունակության հարցերով զբաղվող սոցիալական աշխատողին, երբ առաջին անգամ դիմում եք CalFresh-ի համար, երբ Ձեզնից պահանջվում է գեկուցել փոփոխությունների մասին, կամ երբ վերավկայագրվում եք CalFresh նպաստների համար, որպեսզի նա կարողանա որոշել արդյոք նպաստ ստանալու իրավունք ունեք:

Եթե կարծում եք, որ նոր WINS նպաստի պատճառով սխալ ենք թույլ տվել Ձեր CalFresh նպաստները հաշվարկելիս, ապա կարող եք **այս գրությունը ստանալուց հետո 90 օրվա ընթացքում** պահանջել նահանգային լսումներ՝ գրելով հետևյալ հասցեով՝

Կամ կարող եք զանգահարել 1-800-952-5253 անվճար հեռախոսահամարով: Եթե խուլ եք և խուլերի հեռահաղորդակցման սարք եք օգտագործում, զանգահարեք 1-800-952-8349: Նահանգային լսումներ պահանջելու դեպքում պետք է մեզ ասեք ինչու եք կարծում, թե մենք սխալ ենք թույլ տվել: Լսումների ժամանակ Դուք ինքներդ կարող եք խոսել Ձեր անունից կամ թույլ տալ, որ Ձեր անունից խոսի ընկերը, փաստաբանը կամ այլ անձ, բայց Դուք եք պարտավոր գտնել այդ մարդկանց, ովքեր օգնելու են Ձեզ: Կարող եք անվճար իրավաբանական օգնություն խնդրել Ձեր տարածքում տեղակայված իրավաբանական օգնության գրասենյակից: